ՀԱՂԹԵԼ ԱՇԽԱՐՀԻՆ
և հանգստություն գտնել

Նախագահ Ռասսել Մ. Նելսոն
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ

Քանի որ **ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ** հաղթեց այս անկում ապրած աշխարհին, և քանի որ Նա քավություն գործեց յուրաքանչյուրիս համար, դուք ևս կարող եք հաղթել մեղքով հագեցված, եսակենտրոն և հաճախ հոգնեցնող այս աշխարհին:

Երբ իսկապես ապաշխարեք և փնտրեք Նրա օգնությունը, դուք կարող եք վեր բարձրանալ այս ներկա վտանգավոր աշխարհից և գտնել իսկական հանգստություն:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ՄԵՆՔ ՀԱՂԹՈՒՄ ԱՇԽԱՐՀԻՆ

Փնտրեք և հետևեք Հոգու հուշումներին:

Ամեն օր ապաշխարեք և պահեք ուխտերը, որոնք մեզ զորությամբ են օժտում:

Մնացեք ուխտի արահետի վրա:

2022 թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի ելույթից:

Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՀԱՂԹԵԼ ԱՇԽԱՐՀԻՆ

Դա նշանակում է.

- Հաղթահարել այս աշխարհի բաների մասին ավելի շատ հոգ տանելու գայթակղությունը, քան Աստծո բաների մասին:
- Դա նշանակում է՝ ավելի շատ վստահել Քրիստոսի վարդապետությանը, քան մարդկային փիլիսոփայությանը:
- Դա նշանակում է՝ հրճվել ճշմարտությունով, դատապարտել խաբեությունը և դառնալ «Քրիստոսի խոնարհ հետևորդներ»:
- Ընտրել զերծ մնալ այն ամենից, ինչը հեռացնում է Հոգին և պատրաստ լինել «թողնելու» նույնիսկ մեր սիրելի մեղքերը:
- Աճել Աստծուն և Նրա Սիրելի Որդուն ավելի շատ սիրելու մեջ, քան՝ որևէ մեկին կամ որևէ այլ բան:

ՓՐԿԻՉԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ Է ՄԵԶ վեր՝ դեպի իրեն ձգող այս ընկած աշխարհից՝ օրհնելով մեզ ավելի մեծ գթությամբ, խոնարհությամբ, առատաձեռնությամբ, բարությամբ, ինքնակարգապահությամբ, խաղաղությամբ և *հանգստությամբ*:

ՔԱՆԻ ՈՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ՀԱՂԹԵՑ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՆ, ԴՈՒՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ:

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ԲՈՍՅԱՆ ԲՐՅԻ